ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2018
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ
ՀԱՐՑԱՏՈՄՍ

12 - րդ դասարան

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (17 միավոր)

1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (12 միավոր)

ա. *Նշել ճիշտ պատասխանը. 1 – 8 – րդ առաջադրանքներ:* (0,25 X 8 = 2 միավոր)

1. Ե՞րբ է Դրոյի ջոկատը գրավել Մուշը.

1) 1916 թ. հունվարի 13–ին
2) 1916 թ. փետրվարի 2–ին
3) 1916 թ. մարտի 11–ին
4) 1916 թ. մայիսի 15–ին

2. Ո՞ր արքայի առաջնորդությամբ է ստեղծվել Վանի աշխարհակալությունը:

1) Ռուսա III
2) Ռուսա II
3) Սարդուրի I
4) Արգիշտի I

3. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին.

«Ընդառաջելով ԼՂԻՄ–ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից Հայկական ԽՍՀ–ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»:

Ո՞ր մարմինն է ընդունել այս որոշումը.

1) Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը
2) «Ղարաբաղ» կոմիտեն
3) ԼՂԻՄ մարզային խորհուրդը
4) Հայաստանի Գերագույն խորհուրդը

4. Ադրբեջանի հեղկոմը 1920 թ. վերջին արված իր հայտարարությամբ Խորհրդային Հայաստանի Հանրապետության մաս էր ճանաչում՝

1) Նախիջևանը, Ղազախ-Շամշադինը և Լեռնային Ղարաբաղը
2) Լեռնային Ղարաբաղը, Ղազախ-Շամշադինը և Զանգեզուրը
3) Զանգեզուրը, Ղազախ-Շամշադինը և Նախիջևանը,
4) Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը

5. Ե՞րբ է գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը ստանձնել հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարությունը.

1) 1942 թ. մարտին
2) 1943 թ. փետրվարին
3) 1944 թ. փետրվարին
4) 1944 թ. մարտին

6. ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի ստորաբաժանումները ո՞ր շրջանն են ազատագրել 1993 թ. օգոստոսի 23-ին.

1) Կուբաթլի
2) Ֆիզուլի
3) Զաբրաիլ
4) Զանգելան

7. Ո՞վ է իրականացրել Օսմանյան կայսրության նախկին վարչապետ Սայիդ Հալիմի մահապատիժը.

1) Ստեփան Ծաղիկյանը
2) Արամ Երկանյանը
3) Արտաշես Գևորգյանը
4) Արշավիր Շիրակյանը

8. Ո՞ր շարքի բոլոր ինքնավար իշխանություններն էին գտնվում Արևելյան Հայաստանում:

1) Խաչեն, Շատախ, Զրաբերդ, Վարանդա
2) Վարանդա, Խաչեն, Մոկս, Դիզակ
3) Զրաբերդ, Սասուն, Դիզակ, Խաչեն
4) Դիզակ, Վարանդա, Խաչեն, Զրաբերդ

բ. Լրացնել պատասխանը: **(0,5 X 8 = 4 միավոր)**

1. 1915 թ. տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերը ղեկավարող գործչի անունը համապատասխանեցնել տեղանվանը. **(0,5 միավոր)**

1. Մուսա լեռ	ա) Հակոբ Կոտոյան
2. Ուրֆա	բ) Մկրտիչ Յոթնեղբայրյան
3. Շապին-Գարահիսար	գ) Արմենակ Եկարյան
4. Շատախ գավառ	դ) Տիգրան Անդրեասյան
5. Մուշ	ե) Հայկակ Կոսոյան
6. Վանի Քաղաքամեջ թաղամաս	զ) Ղուկաս Տեռվլեթյան
	է) Բաղդիկ Սիմոնյան

1	2	3	4	5	6

2. Աշխատության վերնագիրը համապատասխանեցնել հեղինակի անվանը: (0,5 միավոր)

1. Հովհան Մամիկոնյան
2. Հովհան Գ Օձնեցի
3. Հովհաննես Դրասխանակերտցի
4. Մովսես Կաղանկատվացի
5. Մատթեոս Ուռհայեցի
6. Ղևոնդ

1	2	3	4	5	6

ա) «Պատմութիւն Աղուանից աշխարհի»
բ) «Պատմութիւն Հայոց»
գ) «Պատմութիւն Տարօնոյ»
դ) «Պատմութիւն»
ե) «Տիեզերական պատմություն»
զ) «Ընդդէմ Պաւղիկեանց»
է) «Ժամանակագրություն»

3. Գահակալման տարիները համապատասխանեցնել Կիլիկյան Հայաստանի տիրակալի անվանը: (0,5 միավոր)

1. Թորոս I
2. Մլեհ
3. Ռուբեն III
4. Հեթում I
5. Թորոս II
6. Լևոն I

ա) 1145 – 1169 թթ.
բ) 1129 – 1137 թթ.
գ) 1100 – 1129 թթ.
դ) 1175 – 1187 թթ.
ե) 1289 – 1306 թթ.
զ) 1169 – 1175 թթ.
է) 1226 – 1270 թթ.

1	2	3	4	5	6

4. Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության: (0,5 միավոր)

ա) Մեղրիի ազատագրումը
բ) Չավնդուրի ճակատամարտը
գ) ջևանշիր կոչվող քոչվոր ցեղի դեմ տարած հաղթանակը
դ) Հալիձորի ճակատամարտը
ե) Տաթև գյուղի մերձակա ամրոցի գրավումը
զ) Զևայի և Որոտանի բերդերի ազատագրումը

5. Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության: (0,5 միավոր)

ա) Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը

բ) Էնվերի սպանությունը

գ) Քեմալական զորքերի վերջնականապես հեռանալը Ալեքսանդրապոլից

դ) Նազըմի մահապատիժը

ե) Մոսկվայում խորհրդային չորս հանրապետությունների լիազոր պատվիրակությունների կոնֆերանսի հրավիրումը

զ) ԱԽՍՀԴՄ-ի ստեղծումը

է) պարենհարկի մտցվելը Խորհրդային Հայաստանում

ը) Սայիդ Հալիմի սպանությունը

թ) Սևրի պայմանագրի կնքումը

ժ) Անկարայի ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը

6. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ: (0,5 միավոր)

ա. «Հանրապետություն» քաղաքական միավորման ձևավորումը

բ. Եռաստիճան դատական համակարգի ներդրումը ՀՀ-ում

գ. ՀՀ-ի վարչատարածքային բաժանումը և մարզերի ստեղծումը

դ. Նախկին խորհրդային հանրապետությունների հայտարարությունը ԱՊՀ ստեղծելու մասին

ե. Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումը

զ. Շուշիի ազատագրումը

1	2	3	4	5	6

7. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ: (0,5 միավոր)

ա) Ակոռիի ճակատամարտը

բ) Վարազտիրոցի նշանակվելը Հայոց իշխան

գ) Գյուտ կաթողիկոսի մեկնումը Տիզբոն

դ) Տիգրանակերտի գրավումն ու ավերումը հռոմեացիների կողմից

ե) Ճարմանայի ճակատամարտը

զ) Խաղխաղի ճակատամարտը

1	2	3	4	5	6

8. Առաջին հանրապետության հետ կապված մշակութային իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

(0,5 միավոր)

ա) Ուսուցչական սեմինարիայի բացումը

բ) Հայ արվեստագետների ցուցահանդեսի բացումը Երևանում

գ) Ճարտարապետ Թ. Թորամանյանի կողմից Անիի պեղումների վերսկսումը

դ) Հայաստանի համալսարանի փոխադրվելը Երևան

ե) ՀՀ նախարարների խորհրդի կողմից պետական հանրային մատենադարան (գրադարան) հիմնելու մասին օրենքի ընդունումը

զ) Հայաստանի հնագիտական քարտեզ կազմելու նպատակով գիտական արշավախմբի կազմակերպումը

1	2	3	4	5	6

գ. *Լրացնել պատասխանը:* **(0,5 X 6 = 3 միավոր)**

1. Տրված պնդումներից որո՞նք են սխալ. **(0,5 միավոր)**

ա. Փիլարտոսը հիմնադրեց ընդարձակ իշխանություն Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայի արևելյան շրջաններում:

բ. Լևոն I–ի օրոք Կիլիկյան Հայաստանի սահմանները հարավում հասան մինչև Միջերկրական ծով:

գ. Այասն ուներ ծովային և ցամաքային բերդեր:

դ. Մլեհը դաշնակցեց Հալեպի ամիրայի հետ:

ե. Թորոս II–ը իր իշխանությանը միացրեց Եդեսիայի կոմսությունը:

զ. Կիլիկյան Հայաստանում մշտական բանակ պահելու համար մտցվել էր ռազմական հարկ:

է. Հիվանդախնամների հոգևոր–ասպետական միաբանությունը հայոց բանակին ամեն տարի տրամադրում էր 4000 ռազմիկ:

ը. Կիլիկյան Հայաստանում հեծելազորը բանակի հիմնական կորիզն էր:

թ. Թորոս II–ի ջանքերով կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Սիս, ուր մնաց մինչև 1441 թ.:

2. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ. **(0,5 միավոր)**

ա. 1920 թ. հոկտեմբերի 14–ին ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոն Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու որոշում ընդունեց:

բ. 1920 թ. դեկտեմբերի 2–ից իշխանությունը Հայաստանում ամբողջապես անցավ ՀՍԽՀ Ռազմական հեղափոխական կոմիտեին:

գ. 1921 թ. ապրիլի 2–ին 11–րդ բանակի զորամասերը մտան Երևան, իսկ ապստամբները ՀՓԿ–ի գլխավորությամբ Բաշ Գյառնիով և Դարալագյազով նահանջեցին դեպի Նախիջևան:
դ. 1921 թ. մայիսի 21–ին Հայհեղկոմը վերակազմավորվեց ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի:
ե. Բաքվում կայացած Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարում ԱԽԴՍՀ–ն վերափոխվեց ԱԽՍՀԴՄ–ի:
զ. ԽՍՀՄ–ի կազմավորման մասին Հռչակագրի և Միութենական պայմանագրի նախագծերը հաստատվեցին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից:
է. 1921 թ. փետրվարի 25–ին Կարմիր բանակի զորամասերը մտան Թիֆլիս, իսկ մինչև մայիսի կեսերը խորհրդային կարգեր հաստատվեցին ամբողջ Վրաստանում:
ը. 1921 թ. փետրվարի վերջին և մարտի սկզբին Ախալքալաքի գավառը ենթարկվեց քեմալական Թուրքիայի հարձակմանը:
թ. 1921 թ. հունիսի 12–ին Ղարաբաղ գործուղվեց Ա. Բեկզադյանը՝ որպես արտակարգ կոմիսար:

3. Տրված պնդումներից որո՞նք են սխալ. (0,5 միավոր)
ա. Կարո Քահքեջյանը 1991 թ. սկզբին հիմնել է «Հայրենասիրական» ջոկատը:
բ. ՀՀ-ի և Եվրամիության (ԵՄ) միջև գործընկերության և համագործակցության համաձայնագիրը կնքվել է 1996 թ.:
գ. Նորարար փորձառական արվեստի կենտրոնը (ՆՓԱԿ) բացվել է 1996 թ. սփյուռքահայ նկարչուհի Սոնիա Պալասանյանի նախաձեռնությամբ:
դ. Սփյուռքահայ երաժիշտ Արամ Ղարաբեկյանը ստանձնել է Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավարությունը՝ հանդես գալով աշխարհի տարբեր երկրներում:
ե. ԼՂՀ զինանշանն ու օրհներգը հաստատվել են 1992 թ. նոյեմբերի 17 –ին:
զ. 2015 թ. ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում տեղի ունեցած միջազգային արարողության ժամանակ ընդունվեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»:
է. ԼՂՀ պաշտպանության խորհրդի նախագահն Արթուր Մկրտչյանն էր:

4. Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունները.
(0,5 միավոր)
ա. 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով Հայաստանը հայտարարվում է «Խորհրդային Սոցիալիստական հանրապետություն»:
բ. Հայհեղկոմի 1921 թ. դեկտեմբերի 8-ի հրամանը հայտնի է «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» անունով

գ. «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթով Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, վերանվանվում էր Ազգային ժողով:
դ. 1919 թ. սեպտեմբերին ստեղծված Հայաստանի միավորված բոլշևիկյան կազմակերպությունների կենտրոնական ղեկավար մարմինը հայտնի էր «Հայաստանի կոմիտե» անունով
ե. Հայ-ռուսական պայմանագրի նախագիծը 1920 թ. նոյեմբերի 4-ին Բաքվում քննարկված մարմինը Ադրբեջանի Ռազմահեղափոխական կոմիտեն էր:
զ.Հայաստանի կառավարության կողմից 1919 թ, մայիսի 28-ին ընդունված փաստաթուղթը կոչվում էր «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ»:
է. Իտալիայի Սան Ռեմո քաղաքում Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագիծը մշակած մարմինը տերությունների Գերագույն խորհրդի խորհրդաժողովն էր:

5. Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում շարքի ժամանակագրական հաջորդականությունը. (0,5 միավոր)

1) Սարգիս Կուկունյանի արշավանքը
2) Թավրիզում «Խարիսխ»զինագործական արհեստանոցի հիմնադրումը
3) Գում Գափու թաղամասում հնչակյանների կազմակերպած խաղաղ ցույցը
4) Գյալիսորի ձորի կռիվը Արաբոյի խմբի կողմից
5) Խանասորի արշավանքը
6) Բաբշենի կռիվը
7) Բաբը Ալիի ցույցը
8) Աղբյուր Սերոբի սպանությունը
9) Ս. Առաքելոց վանքի կռիվը

6. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ. (0,5 միավոր)

ա. Ստալինի անձի պաշտամունքը բացահայտ դարձավ 1924 թ.՝ Լենինի մահից հետո:
բ. Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 64 հայ գեներալ:
գ. Վերջին անգամ Հայկական հարցը քննարկվեց Լոզանի կոնֆերանսում (1921 թ. սեպտեմբերի 21–22):
դ. 1925 թ. հունվարի 25–ին Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությամբ բացվեց հանրապետության առաջին դրամատիկական թատրոնը:
ե. Մոնթե Մելքոնյանը զոհվել է 1993 թ. հունիսի 12–ին Աղդամի մոտ՝ Մարզիլու գյուղում:
զ. Արմֆանի առաջին նախագահ նշանակվեց հայտնի աստղագետ Վիկտոր Համբարձումյանը:

դ) Պնդումների փնջեր (1,5 X 2 = 3)

Փնջի պնդումները ստուգվում են հետևյալ սկզբունքով. յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 0,25 միավոր, սխալ պատասխանի համար ոչ միայն միավոր չի տրվում, այլև հանվում է ևս 0,25 միավոր, չգիտեմ պատասխանի դեպքում միավոր չի տրվում:

1. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

1) Արևմտահայերի երկրորդ համագումարն ընտրել է «Մեկ ազգ, մեկ հայրենիք» կարգախոսով առաջնորդվող, օրենսդրական իրավասություններ ունեցող Արևմտահայ ազգային ժողով:
2) Հայաստանի Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը, որ ստեղծվել էր 1991 թ. նոյեմբերի 15-ին, զբաղվում էր նոր Սահմանադրության նախագծի մշակմամբ:
3) Ռուսաստանի կողմից Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը առաջին անգամ Թուրքահայաստան է կոչվել ժամանակավոր կառավարության որոշմամբ:
4) Խորհրդային երկրում արդյունաբերացման գործընթացն սկսվել է այն ժամանակ, երբ ԽՍՀՄ ղեկավարությունը հայտարարեց նեպից հրաժարվելու մասին:
5) ՀՀ Սահմանադրության փոփոխությունների առաջին տարբերակը հաստատվել է համաժողովրդական հանրաքվեի միջոցով՝ ՀՀ նախագահական չորրորդ ընտրություններից հետո:
6) Մինչև ՀՀ անկախության հռչակումը երկրում արդեն ներդրվել էր բազմակուսակցական համակարգ:

	1	2	3	4	5	6
ճիշտ է						
սխալ է						
չգիտեմ						

2. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

1) 2015 թ. հունվարից Հայաստանը դարձավ Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ և իր ակտիվ մասնակցությունը բերեց կազմակերպության կայացման գործընթացին:

2) Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 20 տարին լրացած ՀՀ քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, հավասար և բազմաստիճան քվեարկությամբ:

3) ԽՍՀՄ կառավարության որոշմամբ՝ 1947 թ. Խորհրդային Հայաստան պետք է ներգաղթեին շուրջ 63 հազար սփյուռքահայեր, սակայն մի շարք պատճառներով հանրապետությունը կարողացավ ընդունել միայն 25 հազար մարդու:

4) 1918 թ. սեպտեմբերին ընդունվեց «Դպրոցի բարեփոխման մասին» օրենքը:

5) Խորհրդային Հայաստան 1921–1936 թթ. և 1950–1982 թթ. ընթացքում միասին վերցրած ավելի շատ մարդ է հայրենադարձվել, քան Մեծ հայրենադարձության տարիներին:
6) Թուրքիայի կողմից 1974 թ. Կիպրոսի հյուսիսային մասի բռնազավթումն այնտեղ բնակվող հայության մի մասի արտագաղթի պատճառ է դարձել:

	1	2	3	4	5	6
ճիշտ է						
սխալ է						
չգիտեմ						

2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 միավոր)

ա. ***Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – րդ առաջադրանքներ:*** **(0,5 X 4 = 2 միավոր)**

1. Ե՞րբ է Օկտավիանոսը հռչակվել ցմահ տրիբուն.

1) Ք.ա. 43 թ.
2) Ք.ա. 36 թ.
3) Ք.ա. 31 թ.
4) Ք.ա. 27 թ.

2. Ե՞րբ է տեղի ունեցել Սասանյան հեղաշրջումը.

1) 226 թ.
2) 254 թ.
3) 256 թ.
4) 287 թ.

3. Ո՞ւմ կողմից հրավիրված հայագետների կողմից է գրվել «Հայերը արիացիներ» աշխատությունը.

1) Ա. Հիտլերի
2) Ջ. Ջենտիլեի
3) Ի. Ստալինի
4) Բ. Մուսսոլինիի

4. Ո՞ր շարքում են թվարկված միայն շումերական քաղաք պետություններ.

1) Ուր, Էբլա, Մեմֆիս, Բաբելոն
2) Մեմֆիս, Քիշ, Լագաշ, Երիքով
3) Ուր, Բիբլոս, Լագաշ, Քիշ
4) Քիշ, Ուր, Լագաշ, Ուրուկ

բ. Լրացնել պատասխանը: (1 X 2 = 2 միավոր)

1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:
(1 միավոր)

ա. Բյուզանդական կայսրության վերականգնումը Միքայել VIII Պալեոլոգոսի կողմից
բ. Իսմայիլի գլխավորությամբ Թավրիզի գրավումը
գ. Կոսովոյի ճակատամարտը
դ. Անկարայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերի պարտությունը Լենկ Թեմուրի զորքերից
ե. Մանազկերտի ճակատամարտը
զ. Առաջին ծովային շուրջերկրյա նավարկության ավարտը

1	2	3	4	5	6

2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.
(1 միավոր)

ա. Սոլոնի բարեփոխումները
բ. Էքբատան մայրաքաղաքի գրավումը Կյուրոս II-ի կողմից
գ. Ստորին Եգիպտոսի գրավումը Կամբիզի կողմից
դ. Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի անկումը
ե. Կյուրոս Կրտսերի ապստամբությունը Արտաքսերքսես II-ի դեմ
զ. Երուսաղեմի գրավումը բաբելոնյան զորքերի կողմից
է. Դարեհ III-ի գահակալության սկիզբը

1	2	3	4	5	6	7

գ. *Լրացնել պատասխանը:* (0,5 X 2 = 1 միավոր)

1. Բերված փաստարկներից ընտրել երկուսը, որոնք հանդիսանում են Վերսալ-վաշինգտոնյան համակարգի անկայունության և անհաստատության պատճառ.

ա. Գաղութների բաժանման հարցում պարտվող երկրների միջև անհամաձայնություն-ները:
բ. Եվրոպայում հովանավորների կարիք ունեցող փոքր պետությունների համակարգի ստեղծումը:
գ. Վերսալյան պայմանագրի վավերացման մերժումը և մեկուսացման քաղաքականության որդեգրումը ԱՄՆ-ի կողմից:
դ. Աշխարհի նոր պետությունների սահմանների որոշումը՝ այնտեղ բնակվող ժողովուրդների շահերը և ինքնորոշման իրավունքը հաշվի առնելով:

ե. Չինաստանի ենթարկումը միջազգային մեկուսացման:
զ. Ռուսաստանի խորհրդայնացումը:

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (3 միավոր)

Վերակառուցման քաղաքականությունը: Արցախյան շարժումը

ա. Ներկայացնել և մեկնաբանել վերակառուցման քաղաքականության էությունը:
(0,5 միավոր)

բ. Ներկայացնել և գնահատել Արցախյան շարժման նոր փուլն ու Սումգայիթի ողբերգությունը: **(0,5 միավոր)**

գ. Ներկայացնել և լուսաբանել Արցախյան շարժման վերելքն ու կարևոր իրադարձությունները: Արտաքին ու ներքին ոչ բարենպաստ պայմանների պարագայում ինչու՞ հայ ժողովուրդը չդադարեց պայքարելուց և չհրաժարվեց իր արդարացի պահանջատիրությունից: **(2 միավոր)**

Է. Մինասյան
Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

11. 04. 2018 թ.